դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես 30,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումար, Դատարանը եզրահանգում է, որ ՀՀ ներքին գործերի նախարարությունից հօգուտ «Հպարտ քաղաքացի» ՍՊ ընկերության ենթակա է բռնագանձման 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Հպարտ քաղաքացի» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Հ-22» ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել 2025թ. մարտի 26-ի կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Հ-22» ծածկագրով պայմանագրի ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից 2025թ. հունիսի 2-ի միակողմանի լուծումը:

ՀՀ ներքին գործերի նախարարությունից հօգուտ «Հպարտ քաղաքացի» ՍՊ ընկերության բռնագանձել 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանի 2025թ. հունիսի 12-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնել:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am